

CASE OF GROPPERA RADIO AG AND OTHERS v. SWITZERLAND, Application no. 10890/84, 1990, Ռադիո Գրոպերան և մյուսները ընդդեմ Շվեյցարիայի(Սարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա: ռադիոհեռարձակման կարգավորում

Ենթաթեմա: վերահեռարձակման հարցեր

Թեսթը: անհրաժեշտությունը

Սանկցիան: արգելքի սահմանում

Վճիռը: արտահայտվելու ազատության իրավունքի խախտում տեղի չի ունեցել

Իրավասությունը: Սարդու իրավունքների եվրոպական դատարան, Շվեյցարիա

Գործի փաստական հանգամանքները.

Gropper Radio AG-ն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է, որն հեռարձակում է ռադիոհաղորդումներ: Մյուս դիմումատուները Շվեյցարիայի քաղաքացիներ են, ընկերության տնօրենն ու միակ բաժնետերն և երկու լրագրող, որոնք աշխատում են ռադիոյում:

1983թ.-ից Ռադիո Գրոպերան օգտագործում էր մեծ հզորությամբ հաղորդակ Իտալիայում տեղակայված աշտարակի վրա՝ Շվեյցարիայի ունկնդիրների համար ռադիոհաղորդումներ հեռաձակելու համար: Հաղորդումները կարող էին ստանալ մասնավոր ռադիոկայաններ ունցող անձինք, ինչպես նաև մալուխային կազմակերպությունները վերահեռարձակելու նպատակով: 1984թ. Ընդունվեց իրավական ակտ, որով արգելվեց Շվեյցարական մալուխային կազմակերպությունների վերահեռաձակել հաղորդումներ այնպիսի հաղորդակներից, որոնք չեն բավարարում ռադիոյին և հեռակապին առնչվող միջազգային պայմանագրերի պահանջները: Ռադիո Գրոպերան չէր բավարարում այդ պահանջները: Կազմակերպությունների մեծ մասը ենթարկվեցին սահմանված կարգին, սակայն մալուխային ընկերություններից մեկը, որը շարունակեց վերահեռարձակումը համապատասխան կարգադրություն ստացավ կապի ոլորտում Շվեյցարիայի իրավասու մարմիններից: Այնուհետև, մալուխային կազմակերպությունը հայց հարուցեց վարչական դատարան և Ռադիո Գրոպերան միացավ այդ դատավարությանը: 1985թ. Բողոքը մերժվեց, քանի որ նկատի ունենալով, որ Իտալիայում տեղադրված հաղորդակը վնասվել է, դիմումատուները այլևս շահագրգռվածություն չունեն շարունակելու դատավարությունը:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Ռադիո Գրոպերան և մյուս երեք դիմումատուները վիճարկում են Իտալիայից հեռարձակվող ռադիոհաղորդումների՝ Շվեյցարիայում կաբելային վերահեռարձակման արգելքը: Դատարանը գտնում է, որ «հեռարձակում»-ը Կոնվենցիայում հիշատակված է ուղղակիորեն արտահայտվելու ազատության իրավունքի հետ կապված: Դատարանը գտնում է, որ և հաղորդումների հեռարձակումը և մալուխով դրանց վերահեռարձակումը մտնում են 10-րդ հոդվածի կարգավորման շրջանակների մեջ առանց հաղորդումների բովանդակությունից ելնելով տարբերակում կատարելու անհրաժեշտության: Վիճարկվող վարչական որոշումներով միջամտություն է դրսևորվել համապատասխան ռադիոյի հաղորդումների մալուխային վերահեռարձակմանը և դրանով հնարավորություն չի տրվել ռադիոտունկնդիրներին ստանալու համապատասխան հաղորդումները: հետևաբար, այս որոշումները հանգեցրել են պետական մարմնի կողմից արտահայտվելու ազատության իրականացման միջամտությանը:

Արդյոք արդարացված էր միջամտությունը թե ոչ.

Դատարանը գտնում է, որ 10(1)-րդ հոդվածի երրորդ նախադասությունը կիրառելի է սույն գործով: Այս նախադասության կիրառության շրջանակն է, որ պետք է որոշվի սվյալ գործով: Այս նախադասության ներառումը հոդվածում պայմանավորված է եղել տեխնիկական և գործնական այնպիսի գործոններով, ինչպիսիք են առկա հաճախությունների սահմանափակ քանակը և հաղորդակների կառուցման համար անհրաժեշտ զգալի կապիտալի ներդրման անհրաժեշտությունը: Այն պայմանավորված էր նաև մի քանի պետությունների քաղաքական բնույթի մտահոգություններով, այն է, որ հեռարձակումը պետք է լինի պետության տնօրինության տակ: Դրանից հետո փոխված տեսակետները և տեխնիկական առաջընթացը, մասնավորապես, կաբելային հեռարձակման առկայությունը հանգեցրեցին մի քանի եվրոպական պետություններում պետական մենաշնորհի վերացմանը և մասնավոր ռադիոկայանների՝ հաճախ տեղական ռադիոկայանների ստեղծմանը, հանրայինի հետ համատեղ: Ավելին, ազգային լիցենզավորման համակարգերը անհրաժեշտ են ոչ միայն ազգային մակարդակով հեռարձակող կազմակերպությունների գործունեության կանոնակարգման համար, այլև ավելի շատ միջազգային կանոնակարգերը իմպլեմենտացնելու համար, այդ թվում՝ թիվ 2020 ռադիո կանոնակարգը: Այնուամենայնիվ, երրորդ նախադասության նպատակն ու շրջանակները պետք է դիտվեն ամբողջ հոդվածի համատեքստում, մասնավորապես, հոդվածի երկրորդ մասի հետ կապի մեջ: Դատարանը նշում է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը չի ներառում 10-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասության նմանությամբ դրույթ: Դաշնագրի համապատասխան հոդվածի վերաբերյալ բանակցությունների պատմությունը ցույց է տալիս, որ նման դրույթի ներառումը առաջարկվել է ոչ թե հեռարձակվող տեղեկատվության լիցենզավորման նպատակով, այլ հեռարձակման տեխնիկական միջոցների լիցենզավորման համար հաճախությունների օգտագործման մեջ քառսից խուսափելու համար: Այնուամենայնիվ, այդ դրույթը չներառվեց այն հիմքով, որ այն կարող է օգտագործվել արտահայտվելու ազատության իրականացմանը խոչընդոտելու նպատակով, և որոշվեց, որ նման դրույթի անհրաժեշտությունը չկա, քանի որ

լիցենզավորումը համապատասխան իմաստով ենթադրվում է, որ նախատեսվում էր հողվածի երրորդ մասով՝ “հասարակական կարգի” սահմանման տակ: Այսպիսով, Կոնվենցիային 10-րդ հողվածի 1-ին մասի երրորդ նախադասության նպատակը այն է, որ հստակեցվի, որ անդամ պետություններին թույլատրվում է վերահսկել լիցենզավորման համակարգի միջոցով իրենց տարածքում հեռարձակման կազմակերպման կարգը, մասնավորապես, տեխնիկական ասպեկտները: Բայց այն չի ենթադրում, որ լիցենզավորման միջոցները չպետք է ենթակա լինեն 10 –րդ հողվածի 2-րդ մասի պահանջներին, քանի որ սա կհանգեցնի 10-րդ հողվածի նպատակին և առարկային հակասող արդյունքի: Հետևաբար, երրորդ նախադասությունը սույն գործով կիրառելի է այնքանով, որքանով այն թույլ է տալիս իրականացնելու Շվեյցարիայում կազմակերպչական բնույթի հսկողություն:

Դատարանը ընդգծում է, որ Գրոպերա ռադիոկայանը Իտալական իրավագործության տակ էր մտնում, բայց դրա հաղորդումների վեռահեռարձակումը կաբելային ընկերությունների կողմից Շվեյցարիայի իրավագործության տակ է ընկնում: Վերահեռարձակման արգելքը ամբողջությամբ համապատասխանում էր Շվեյցարական տեղական ռադիո համակարգին, որը հիմնադրված էր համապատասխան իրավական ակտով:

Միջամտությունը այսպիսով, երրորդ նախադասության համապատասխան էր, մնում է որոշել, թե այն նախատեսված էր արդյոք օրենքով, հետապնդում էր արդյոք իրավաչափ նպատակ և անհրաժեշտ էր արդյոք ժողովրդավարական հասարակությունում:

Դատարանը գտավ, որ միջամտությունը սահմանված էր օրենքով և հետապնդում էր երկու նպատակ՝ միջազգային հեռահաղորդակցության կարգի պահպանումը և այլոց իրավունքների պաշտպանությունը:

Որոշելու համար, թե արդյոք միջամտությունը անհամաչափ չէր դույն գործով, անհրաժեշտ է հավասարակշռել միջազգային հեռուստահաղորդակցության կարգի և այլոց իրավունքների պաշտպանության պահանջները դիմումատուի և մյուսների՝ մալուխով համապատասխան Ռադիոյի հաղորդումների վերահեռարձակման շահի հետ:

Դատարանը հիշեցնում է, որ 1983թ. Շվեյցարիայում կամապատասխան իրավական ակտի ընդունումից հետո Շվեյցարական կաբելային ընկերությունների մեծ մասը դադարեցրեց ռադիոհաղորդումների վերահեռարձակումը: Շվեյցարական իշխանությունները երբեք ուղղակիորեն չեն դադարեցրել հաղորդումների հեռարձակումը, թեև նրանք փորձել են բանակցել Իտալական իշխանությունների և Միջազգային հեռուստահաղորդակցության միության հետ: Երրորդը, այդ արգելքը կիրառվել է մի ընկերության նկատմամբ, որը հիմնադրված էր Շվեյցարական օրենսդրության հիման վրա, որի բոլոր ունկնդիրները ապրում են Շվեյցարիայի տարածքում, և շարունակել են ստանալ հաղորդումներ մի քանի այլ կայաններից, և վերջապես սահմանված ընթացակարգը կարող էր անհրաժեշտ լինել խուսափելու համար օրենքի շրջանցումը, դա գրաքննության եղանակ չէր, որն ուղղված էր համապատասխան հաղորդումների բովանդակության դեմ, այլ միջոց էր, որն ուղղված էր մի ռադիոկայանի դեմ, որը Շվեյցարական իշխանությունները կարող էին ողջամտորեն դիտել որպես փաստացի Շվեյցարական կայան, որը գործում է

Շվեյցարիայի սահմաններից դուրս երկրում գործող հեռուստահաղորդակցության համակարգը շրջանցելու նպատակով: Հետևաբար, իշխանությունները չեն անցել հայեցողական լուսանցքը, որը վերապահված էր նրանց Կոնվենցիայի ուժով:

Արտահայտվելու ազատության իրավունքի խախտում տեղի չի ունեցել: